«ԵՐՔԱՂԼՈՒՅՍ» ՓԲԸ

ք.Երևան 375012 Բուզանդի 1/4
Հեռ.54-17-89,54-51-89
«Արարատբանկ» ԲԲԸ Հ/Հ 1510004597930100 ՀՎՀՀ 02504913

68 / N 1035

«24» 09 2019թ.

«ՄԱՐԻԱ ԼԱՅԹԻՆԳ» ՍՊԸ-ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գաբրիելյան,

«Երքաղլուս» ՓԲԸ-ի /այսուհետ՝ Պատվիրատու/ և «Մարիա Լայթինգ» ՍՊԸ-ի /այսուհետ՝ Մատակարար/ միջև 2019 թվականի մարտի 6-ին կնքված N «ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-19/3»-1 ծածկագրով՝ Ապրանքների մատակարարման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետով սահմանված /թիվ 1 հավելված/ ժամկետում և տեխնիկական բնութագրին համաձայն, մասնավորապես 22-րդ չափաբաժնով նախատեսված՝ Մատակարարը պարտավոր էր մատակարարել «Լուսատու ԺԿՈՒ 150» ապրանքատեսակը, այն է՝ մատակարարումն իրականացնել հայտը տալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, սակայն ուշացումով է մատակարարվել հիշյալ ապրանքը, ինչպես նաև մատակարարված ապրանքները չեն համապատասխանել Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին:

2019 թվականի սեպտեմբերի 13-ին, «Երքաղլուս» ՓԲԸ-ն էլեկտրոնային փոստի միջոցով Մատակարարին ծանուցել է, որպեսզի Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարվեն պատշաճ և ժամանակին, այն է՝ մատակարարված ապրանքները փոխարինվեն և մատակարարվի համապատասխան ապրանք:

«Երքաղլուս» ՓԲԸ-ի 2019 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 68 / 1000 գրությամբ Մատակարարը զգուշացվել է, որ Պայմանագրով ստանձնած 22-րդ չափաբաժնի մասով պարտավորությունները չկատարելու դեպքում, Պատվիրատուն նշված չափաբաժնի մասով միակողմանի հրաժարվելու է հիշյալ Պայմանագրից:

Հիշեցնում եմ նաև, որ Պայմանագրով սահմանված ժամկետում 22-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքները Ձեր կողմից չեն փոխարինվել և ժամկետում չեն մատակարարվել, հետևաբար խախտվել է Պայմանագրով սահմանված էական պայմանները, ուստի.

ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345 հոդվածի 1-ին մասով, 466 հոդվածի 3-րդ մասով, Պայմանագրի 2.1.7 կետով և 2.1.7.1 կետի «ա» և «բ» ենթակետերով, 22-րդ չափաբաժնի մասով «Երքաղլուս» ՓԲԸ-ն միակողմանի հրաժարվում է Մատակարարի հետ կնքված N «ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-19/3»-1 պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և,

պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի

կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Մատակարարը պարտավոր է ողջամիտ ժամկետում վճարել 22 չափաբաժնի մասով Պայմանագրի կատարման ապահովումը, այն է՝ 54.500 ՀՀ դրամ և Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով սահմանված, որպես տույժ 572 ՀՀ դրամ և տուգանք՝ 818 ՀՀ դրամ, որը հաշվանցվելու է Պատվիրատուի և Մատակարարի միջև առկա պայմանագրային գումարից:

Տեղեկացնում եմ նաև, որ Պայմանագրի 2.1.6 կետի համաձայն, «Երքաղլույս» ՓԲԸ-ն պահանջելու է հատուցել այն վնասները, որը կարող է առաջանալ Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով ապրանք ձեռք բերելու ժամանակ՝ Պայմանագրով սահմանված գնի համեմատ առաջացող դրական տարբերության մասով:

ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ՝ Գ.ՎԱՐԴԱՆՅԱՆ

Կատարող Ա. Մինասյան
010. 54- 39- 80